Պայմանագիր N 8/4-21

ք. Երևան 21 ապրիլի 2008 թ.

"Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն" ՊՈԱԿ-ը (հետագայում՝ "Պատվիրատու") ի դեմս տնօրեն Ա.Ղալթախչյանի, մի կողմից, և "Հելիքս Կոնսալտինգ" ՍՊԸ-ն (հետագայում՝ "Կատարող") ի դեմս տնօրեն Ա. Մխիթարյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է ստեղծել ՀՀ Կառավարության պաշտոնական նոր կայքը համապատասխան Հավելված 1-ում ներկայացված տեխնիկական առաջարկի:

1.2 Կատարողը պարտավորվում է կատարել վերը նշված կայքի տեխնիկական սպասարկումը սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման ակտը երկու կողմերի ստորագրման պահից սկսած 3 ամիս ժամանակամիջոցում:

Տվյալ ժամանակամիջոցի համար նախատեսված սպասարկման աշխատանքները ներառում են կայքում առկա թերությունների վերացում, ծրագրային փոփոխություններ և բովանդակության կառավարման համակարգով աշխատող համապատասխան աշխատակիցների ուսուցում:

Տվյալ աշխատանքների տևողությունը չի կարող գերազանցել ամսական 20 ժամը:

1.3 Կատարողի պարտավորությունների մեջ չեն ներառվում վերը նշված կայքում ներկայացվող բովանդակության տրամադրման և ներմուծման աշխատանքները:

1.4 Կատարողը պատասխանատու չէ կայքում զետեղվող բովանդակության համար:

1.5 Պատվիրատուի կողմից լրացուցիչ աշխատանքներ պահանջելու դեպքում կազմվում է Պայմանագրի լրացում՝ նոր տեխնիկական պահանջներով, վճարման ժամկետներով ու պայմաններով:

1.6 Կայքի տեղակայումը (hosting) և տիրույթը (domain) տրամադրվում է պատվիրատուի կողմից:

1.7 Կատարողը պարտավորվում է ավարտել սույն պայմանագրի 1.1. կետում նշված աշխատանքները մինչև 2008թ. դեկտեմբերի 09-ը:

2. Վճարման պայմանները

2.1 Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 2,370,000 (երկու միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) դրամ ներառյալ ԱԱՀ:

2.2 Վճարումները կատարվում են 2 փուլով.

- կանխավճար, ընդհանուր գումարի 36.6% չափով, Պայմանագրի կնքման պահից սկսած 10 բանկային օրվա ընթացքում,

- վերջնավճար, ընդհանուր գումարի 63.4% չափով՝ աշխատանքների հանձնման-ընդունման ակտը երկու կողմերի ստորագրման պահից սկսած 10 բանկային օրվա ընթացքում: Հանդիսանալով սույն պայմանագրի ավարտական վճարումը, վերջնավճարը ներառում է 1.1 և 1.2 կետերով նախատեսված բոլոր աշխատանքների վճարումները:

2.3 Սույն Պայմանագրով վճարումները համարվում են կատարված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցված գումարի հաշվառման կամ դրամարկղ կանխիկ վճարման պահից:

3. Տարաձայնություններ և վեճեր

3.1 Սույն Պայմանագրից բխող հնարավոր տարաձայնությունները և վեճերը Պատվիրատուն և Կատարողը լուծում են բանակցությունների միջոցով: Այն դեպքում, երբ կողմերը փոխադարձ համաձայնության չեն գալիս, տարաձայնությունները և վեճերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1 Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է 2008թ. ապրիլի 21-ից մինչև 2008թ. դեկտեմբերի 09-ը:

5. Ընդհանուր պայմաններ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների կատարման ավարտը:

5.2 Սույն Պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում ուժի մեջ են, եթե դրանք ձևակերպված են գրավոր և ստորագրված են երկուստեք:

5.3 Կողմերից ոչ մեկը չի կարող հատկացնել կամ փոխանցել մի երրորդ կողմին սույն Պայմանագրից բխող իրավունքները, պարտականությունները կամ պարտավորվածությունները առանց մյուս կողմի գրավոր համաձայնության:

5.4 Սույն Պայմանագիրը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին՝ մեկ օրինակ:

6. Կողմերի իրավաբանական հասցեները

Պատվիրատու	Կատարող
"Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն" ՊՈԱԿ	"Հելիքս Կոնսալտինգ" ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0051, Վրացական 4-րդ նրբ., 7-10
ՀՎՀՀ 00833792	ՀՎՀՀ 00031518
h/h 00438960100	h/h 220000129423-000
Կոնվերսբանկ 19300	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
Տնօրեն՝	Տնօրեն՝
Ա.Ղալթախչյան	Ա. Մխիթարյան

Հավելված 1
կից № 8/4-21, 21 ապրիլի 2008 թ. պայմանագրի

Հայաստանի Հանրապետության Կառավարության www.gov.am Պաշտոնական նոր կայքի ստեղծման տեխնիկական առաջարկ

«Հելիքս Կոնսալտինգ» ընկերության մասնագետների կողմից կատարվել է ՀՀ Կառավարության առկա կայքի (այսուհետև "կայք") ուսումնասիրություն, որի արդյունքում էլ հայտնաբերվել են ստորև ներկայացված թերությունները:

Ընդհանուր տեսք և նավիգացիա

Ներկայումս կայքում բացակայում են որոշակի կոմպոզիցիոն և գունային լուծումները: Չկան վիզուալ էլեմենտների որոշակի շեշտադրումներ և համընդհանուր ոճ, ինչի պատճառով կայքը անդեմ է:

Վերնագրերը և հղումները իրենց գույնով և տեսքով շատ տեղերում ուղակի միանման են և գործածողը կարող է հասկանալ, որ տվյալ տեքստը հանդիսանում է հղում, միմիայն մկնիկի կուրսորը տեքստի վրա պահելով:

Քանի որ կայքի բովանդակության մի մասը ներկայացված է PDF ֆորմատի ֆայլերի տեսքով, ցանկալի է, որ ամեն մի հղման կողքին, բացի PDF փաստաթղթի նշանից, ավտոմատ արտատպվի նաև տեղեկություն տվյալ ֆայլի չափի մասին. օր.՝ (1.2 Մբ): Շատ գործածողներ Ինտերնետ են մուտք գործում օգտագործելով դանդաղահոս կապուղիներ, որի արդյունքում էլ մեծ չափի PDF ֆորմատի փաստաթղթեր բացելու դեպքում (Acrobad Reader ծրագրային փաթեթը ավտոմատ կերպով բացվում է զննիչի (browser) մեջ) զննիչը կարող է «կախվել»:

Հայերեն բովանդակություն

Կայքում զետեղված հայերեն բովանդակությունը ներկայացված է ArmSCII-8 տառաշարով, որի օգտագործումը հանգեցնում է հետևյալ պրոբլեմներին՝

- էջի զննման համար գործածողը ստիպված է տեղադրել վերը նշված տառաշարի ստանդարտով աշխատող որևէ տառատեսակ (օր. Arial Armenian, Times Armenian, Arial AM, և այլն), նույնիսկ եթե էջը զննվում է ժամանակակից օպերացիոն համակարգ ունեցող համակարգչով,
- գլոբալ որոնման համակարգերը, ինչպիսին են Google-ը կամ Yahoo-ն, չեն կարող ճիշտ ինդեքսավորել և ընդգրկել կայքի հայերեն էջերը որոնման արդյունքներում http://www.google.am/search?hl=hy&q=site%3Agov.am%2Farmversion ,





- այլ ծրագրային փաթեթներից դեպի կայք տեքստերի copy/paste-ի ժամանակ տեղի է ունենում որոշակի տառերի կորուստ ("Գ", "և", և այլն):

Կայքի խոցելիություն և անվտանգություն

Կայքի դինամիկ աշխատող որոշ բաժիններում URL-ի հարցման պարամետրերի փոփոխման միջոցով կարելի է կատարել SQL Injection, որը կարող է բերել ինչպես կայքում ոչ ցանկալի փոփոխությունների կատարմանը, այնպես էլ գոյություն ունեցող բովանդակության վերացմանը՝
http://www.gov.am/armversion/information_centre_8/gov_decision.php?id=10';033&date=1194465600&show=on_blank :
PHP-ի կողմից բոլոր առաջացած սխալները նույնպես արտապատկերվում են կայքում՝ ավելացնելով խոցելիության աստիճանը.



Վեբ սերվերը հնարավորություն է տալիս առանց որևէ բարդությունների գնել կայքի ֆայլային կառուցվածքը՝

http://www.gov.am/armversion/information_centre_8/ .

Index of /armversion/information_centre_8

Name	Last modified	Size	Description
Parent Directory	11-Jan-2008 10:54	-	
notes/	04-Oct-2005 09:49	-	
calendar am.php	10-Oct-2005 13:05	17k	
calendar en.php	12-Oct-2005 15:09	18k	
db.php	04-Oct-2005 17:39	1k	
gov blank.htm	04-Oct-2005 09:49	24k	
gov blank.php	04-Oct-2005 09:50	14k	
gov decision.htm	04-Oct-2005 09:50	25k	
gov decision.php	04-Oct-2005 09:45	15k	

Բովանդակության կառավարման համակարգ (ԲԿՀ)

Գոյություն ունեցող ԲԿՀ-ն հնարավորություն է տալիս ղեկավարելու միայն կայքի որոշակի բաժինների բովանդակությունը: Կայքի մեծ հատված կազմված է ստատիկ HTML ֆայլերից:
Նման դեպքում նույնիսկ տարրական տեքստային փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ է HTML լեզվին և այլ տեխնիկական հմտությունների տիրապետող մասնագետ:

Տեխնոլոգիաներ և W3C ստանդարտներ

Կայքի էջկապը կատարված չէ ժամանակակից ստանդարտ հանդիսացող xHTML1,0 ստանդարտով: Նույնիսկ HTML 4.01 Transitional ստանդարտով գրված լինելով հանդերձ չի համապատասխանում այդ ստանդարտին.

http://validator.w3.org/check?uri=http%3A%2F%2Fwww.gov.am%2Fenversion%2Findex.html&charset=%28detect+automatically%29&doctype=Inline&group=0

W3C® Markup Validation Service

Check the markup (HTML, XHTML, ...) of Web documents

Jump To: Validation Output

This page is not Valid HTML 4.01 Transitional!

Result:	Failed validation, 31 Errors	
Address :	http://www.gov.am/enversion/index.html	
Encoding :	iso-8859-1	(detect automatically)
Doctype :	HTML 4.01 Transitional	(detect automatically)

Ներքին որոնման համակարգ

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ ներքին որոնման համակարգը միշտ չէ, որ տալիս է ճշգրիտ արդյունքներ: Համապատասխան բաժնի ընտրությունը որոնման արդյունքների վրա ազդեցություն չի թողնում: PDF ֆորմատով բովանդակությունը ընդհանրապես դուրս է մնում որոնման արդյունքներից:

Հետադարձ կապ

Հետադարձ կապի ձևը հնարավորություն է տալիս ուղարկելու հաղորդագրություն էլ. փոստի դաշտում նշելով ցանկացած բառ: Բացի դրանից, տվյալ ձևում CAPTCHA համակարգի չկիրառման պատճառով ավտոմատ գովազդային (SPAM) ծրագրերը կարող են ուղարկել ցանկացած տիպի պարունակություն ունեցող հաղորդագրություններ:

Համապատկերներ

Համապատկերները պատրաստված են AnfyTeam-ի applet-ների ոչ գրանցված տարբերակով: Ցանկացած գործածածող սեղմելով մկնիկի աջ կոճակը կտեսնի տվյալ փաթեթի գրանցված չլինելու մասին հաղորդագրությունը, որը վայել չէ ՀՀ Կառավարությանը.
http://www.anfyteam.com/purchase.html

«Հելիքս Կոնսալտինգ» ընկերությունը առկա թերությունները վերացնելու, կայքը արդիականացնելու և վերագինելու համար պարտավորվում է.

- կատարել առկա կայքի բաժինների այցելությունների համեմատական վերլուծություն՝ հիմնվելով վիճակագրական տեղեկությունների վրա,
- մշակել նոր գրաֆիկական արտադեմ,
- մշակել ՀՀ Կառավարության կարիքները բավարարող Բովանդակության կառավարման համակարգ (այսուհետ՝ ԲԿՀ), որը հնարավորություն կընձեռի ղեկավարելու կայքի բովանդակությունն առանց որևէ տեխնիկական գիտելիքների, ինչպես նաև կապահովի բազմաստիճան արտոնությունների համակարգ՝ թույլ տալով համապատասխան աշխատակիցներին և վարչություններին ղեկավարելու իրենց պատասխանատվության ներքո գտնվող բովանդակությունը,
- ԲԿՀ-ում տրամադրել հնարավորություն օգտագործելու մեդիա (նկարներ, աուդիո, վիդեո) ֆայլեր,
- կայքի իրականացումը կատարել գոյություն ունեցող W3C ստանդարտներին համապատասխան՝ Strict xHTML 1.0, CSS 2.0,
- կայքի հայերեն բաժինները պետք է աշխատեն Յունիկոդ տառաշարով, որը կապահովի վերը նշված պրոբլեմների վերացումը,
- հատուկ ծրագրային միջոցներով հիմնապաշարում և HTML ֆայլերում առկա ArmSCII-8 տառաշարով բովանդակությունը պետք է վերափոխել Յունիկոդի,
- ստեղծել որոնման համակարգ, որը թույլ կտա կատարել ինչպես պարզ, այնպես էլ ընդլայնված որոնում՝ ընդգրկելով նաև PDF ֆայլերը,
- առավելագույն չափով բացառել կայքի խոցելիությունը,
- հետադարձ կապի ձևը համապատասխանեցնել անհրաժեշտ ֆորմատի և մշակել ծրագիր, որը կնվազարկի ոչ լիարժեք տվյալներով հաղորդագրությունների քանակը, հնարավորություն տալ գործածողներին ուղարկելու "անանուն" հաղորդագրություններ,
- կատարել ԲԿՀ-ի հետ առնչվող համապատասխան աշխատակիցների վերապատրաստում:
- Մշակել շեշտված բլոկ ՀՀ Կառավարության գերակա ուղղություններին վերաբերող փաստաթղթերի համար:
- Նախատեսել առաջին էջում տեղ Վարչապետի ողջույնի խոսքի համար:
- Ստեղծել Հաճախ տրվող հարցերի (FAQ) բաժին:
- Բոլոր լուսանկարները, որոնք դրված են "Վարչապետ" բաժնում պետք է հանել, թողնել մի քանիսը շատ փոքր ֆորմատով եւ տեղադրել "կենսագրություն" ենթաբաժնում:
- Միավորել "Կառուցվածք" եւ առանձին "Կազմ" բաժինները:
- Ստեղծել բաժանորդագրության համակարգ, որը հնարավորություն կտա գործածողներին բաժանորդագրվել կայքի հաճախ թարմացվող բաժիններին: Բաժանորդները պետք է ստանան նորությունները ավտոմատ կերպով:
- Ստեղծել համակարգ, որի օգնությամբ նորությունների, զանազան տեղեկությունների էջերի հասցեները ուղարկվեն էլ. հասցեներով: (e-mail this page to a friend)
- Լուսանկարների համար պետք է ունենալ ընդամենը մեկ էջ: Այստեղ կտեղադրվեն high resolution լուսանկարներ, որոնց դասակարգումը լինելու է ըստ ամսաթվի, նշվելու են լուսանկարի վրա տեղ գտած անձինք, ամսաթիվը, հեղինակային իրավունքները եւ այլն: Սա հնարավորություն կտա այլեւս չուղարկել մեծածավալ էլ. նամակներ ԶԼՄ-ներին, այլ հենց կայքից բեռնավորել լուսանկարները: Պետք է անպայման նշել, որ լուսանկարների չարտոնված օգտագործումը եւ մոնտաժը կարող են բերել պատասխանատվության:

- Գրադարան բաժինը պետք է ունենա ենթաբաժիններ (օրինակ՝ "Գործունեության իրավական հիմքերը" և "Աշխատակազմ" բաժնի "Իրավական ակտերը" պետք է տեղափոխել "Գրադարան"):

Պատվիրատու

Տնօրեն՝

_____Ա.Ղալթախչյան

Կատարող

Տնօրեն՝

_____Ա. Մխիթարյան